ԹԵՈՓԻԼՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ

ԱՌ ԱՎՏՈԼԻԿՈՍ

Սկիզբը՝ 2022 Ը., ԺԱ. եւ 2023 Է.

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Ա. *Թեոփիլոսն Ավտոլիկոսին ողջություն է մաղթում։ Քանի որ մատենագիրները սիրում են հանուն սին փառքի բյուրավոր գրքեր գրել՝ ոմանք՝ աստվածությունների, պատերազմների կամ ժամանակների մասին, այլք՝ անիմաստ առասպելների ու այլ կարգի չնչին բաների, որոնցով ցայսօր դու էլ ես տարված եւ չես էլ հոգնում նման շարշարանքներից, իսկ ինձ հանդիպելիս բարբաջանք համարում ճշմարտության խոսքը եւ կարծում ես, որ մեր գրվածքները ժամանակագրորեն նորաթուխ են, ուստի առանց սրտնեղելու, Աստծու օգնությամբ, ցույց կտամ քեզ մեր գրքերի հնամենիությունը՝ կարճ շարադրանքով, ինչ է թե չզլանաս այն կարդալ ու տեսնես ձեր մոգոնող մատենագիրների դատարկաբանությունը։*

Բ. *Հարկ է, որ հեղինակներն ականատեսները լինեին այն ամենի, ինչ պնդում են կամ դրանց մասին հավաստի տեղեկությունները ականատեսներից քաղած լինեին։ Արդ, ոչ արժանահավատ բաների մասին գրողներն ինչ-որ առումով ջուր ծեծողներ են։ Ինչ օգուտ այն բանից, որ Հոմերոսը նկարագրել է Տրոյական պատերազմն ու այնքան մարդու մոլորության մեջ գցել, կամ որ Հեսիոդոսը կազմել է իր իսկ կողմից այսպես հորջորջված աստվածների ծննդաբանությունները, կամ որ Օրփեոսը թվարկել է երեք հարյուր վաթսունհինգ աստվածություն, որոնցից հենց ինքն էլ իր կյանքի մայրամուտին հրաժարվել է՝ իր «Կտակներ»-ում խոստովանելով, որ Աստված մի է։ Ինչի՞ հասան Արատոսը կամ նրա նմանները՝ հանգամանորեն նկարագրելով համաշխարհային երկնային ոլորտը՝ բացի անարժանաբար վաստակած մարդկային փառքից։ Ինչ ճշմարիտ բան ասացին նրանք։ Կամ ինչ օգուտ բերեցին Եւրիպիդեսին, Սոֆոկլե-*

սին եւ այլ ողբերգուների իրենց իսկ ողբերգությունները, կամ Մենանդրոսին, Արիստոփանեսին եւ մյուս կատակերգուներին՝ իրենց կատակերգությունները, կամ Հերոդոտոսին եւ Թուկիդիտեսին՝ իրենց պատմությունները, Պյութագորասին՝ սրբարանն ու Հերկուլեսյան սյունները[1], Դիոգենեսին՝ կինիկ փիլիսոփայությունը, Էպիկուրին՝ նախախնամությունը հերքող իր իսկ ուսմունքը, Էմպեդոկլեսին՝ աստվածամերժությունը, կամ Սոկրատեսին՝ շան, սագի, Պլատոնի կայծակնահար Ասկլեպիոսի եւ աստվածների անուններով երդվելը, որոնց նա աղոթում էր։ Եւ ինչո՞ւ նա կամավոր մահ ընդունեց եւ հետմահու ի՞նչ պարգեւ ստանալու ակնկալիք ուներ։ Ի՞նչ օգուտ տվեցին փիլիսոփա Պլատոնին եւ մյուս փիլիսոփաներին իրենց իսկ ուսմունքները, ընդ որում՝ նրանք այնքան շատ են, որ հականե-հանվանե չեմ կարող բոլորին թվարկել։ Այս մասին խոսում եմ, որպեսզի ցույց տամ նրանց անօգուտ եւ անաստված մտայնությունը։

Գ. Բանն այն է, որ ի սեր սին եւ ունայն փառքի՝ ո՛չ իրենք բոլորը ճանաչեցին ճշմարտությունը, ո՛չ էլ այլոց բերեցին առ ճշմարտություն։ Արդ, նրանց արտահայտած մտքերը դիմակազերծում են իրենց, քանի որ նրանց ասածները հակասում էին մեկմեկու, ընդ որում՝ նրանցից շատերը հրաժարվում էին սեփական դրույթներից. նրանք ոչ միայն հերքում էին իրար, այլեւ նրանցից ոմանք ձաղկում էին իրենց իսկ ուսմունքները, այնպես որ նրանց փառքը շուռ էր գալիս անպատվության եւ հիմարության, որովհետեւ խոհեմ մարդիկ դատափետում էին նրանց։ Իրականում խոսում էին աստվածներից, այնուհետեւ անաստվածություն ուսուցանում, խոսում էին աշխարհի արարումից, իսկ վերջում պնդում, որ ամեն ինչ ինքնին գոյություն ունի, խոսում էին Նախախնամությունից, իսկ հետո նաեւ սովորեցնում, որ աշխարհն առանց դրա գոյություն ունի։ Եւ ի՞նչ։ Բարոյականության մասին գրելուն ձեռնամուխ լինելիս մի՞թե չէին ուսուցանում անառակություն, շնություն ու պոռնկություն եւ ամենազզրելի հանցանքները գործել։ Իսկ իրենց աստվածների մասին էլ քարոզում էին, որ նրանք են առաջինը զզրելի խառնակություններ արել եւ նողկալի խորտիկներ կերել։ Արդ, ո՞վ չի գովերգում իր իսկ երեխաներին խժռող Քրոնոսին կամ Մետիսին կուլ տված Զեւսին, որն աստվածների համար մեղսալից խնջույքներ էր կազմակերպում (հընթացս որոնց,

[1] Ինչպես հայտնի է, Պյութագորասը Եգիպտոսում այցելել է մեհյան եւ ծանոթացել աստվածների ուսմունքին. նաեւ տեսել է Հերկուլեսյան սյունները, որոնք այլ՝ խորհրդավոր նշանակություն եւս ունեն։

ասում են, նրանց սպասավորում էր կաղ դարբին Հեփեստոսը), եւ նրա քույր Հերային, որը ոչ միայն Զեւսի կինը դարձավ, այլեւ իր պիղծ շուրթերով անում էր այն, ինչ ասելն իսկ ամոթ է։

Իսկ Զեւսի մյուս գործերի մասին, որոնք գովերգում են ձեր բանաստեղծները, դու ինքդ էլ, իհարկե, տեղյակ ես։ Արդյոք արժե, որ ես վերապատմեմ Պոսեյդոնի, Ապոլլոնի, Դիոնիսոսի, Հերակլեսի, բղջախոհ Աթենասի եւ անամոթ Ափրոդիտեի գործերը, որոնց մասին հանգամանորեն խոսել եմ մեկ այլ գրքում[2]։

Դ. Նմանօրինակ հերքումներ անելու կարիքը չէի զգա, եթե չտեսնեի, որ տակավին երկմտում ես ճշմարտության վարդապետության հարցում։ Պատճառն այն է, որ դու, լինելով բավական խոհեմամիտ, սիրահոժար հանդուրժում ես հիմարներին. այլապես ինքդ քեզ թույլ չէիր տա տարվել անմիտ մարդկանց սին խոսքերով եւ չէիր հավատա այն արմատավորված ասեկոսեներին, որոնք տարածում են անաստված մարդիկ՝ մեզ զրպարտելով այն բանում, որ իբրեւ թե մենք՝ աստվածապաշտներս եւ քրիստոնյա կոչվողներս, բոլորի համար ընդհանուր կանայք ունենք եւ ապրում ենք անօրեն, խառնակ կյանքով, մինչեւ իսկ զուգավորվում ենք հարազատ քույրերի հետ, եւ, որ ամենից անաստված եւ անմարդկային բանն է, մարդկային միս ենք ուտում։ Բացի այդ՝ ասում են, որ մեր ուսմունքը վերջերս ի հայտ եկավ, որ մենք ի հաստատումն մեր իսկ դավանած ճշմարտությանը եւ մեր ուսմունքին՝ ասելու բան չունենք, եւ որ մեր ուսմունքն անհեթեթություն է։ Ես խիստ զարմանում եմ, որ դու, քննասեր եւ ամենայն առարկայի ուսումնասիրության մեջ քննախույզ լինելով, դույզն-ինչ չես ջանում մեզ լսել։ Քանզի գիտեմ, եթե հնար ունենաս, չես զլանա գիշերը եւս գրադարաններում անցկացնելու։

Ե. Քանի որ բյուրավոր գրքեր ես ընթերցել, ապա ինչ ես մտածում Զենոնի, Դիոգենեսի եւ Կլեանթոսի գրքերում արծարծված կարծիքների մասին, որոնք ուսուցանում են, որ կարելի է մարդկային միս ուտել, որ երեխաները կարող են եփել եւ խժռել իրենց հարազատ հայրերին, եւ եթե որեւէ մեկը չկամենա ճաշակել կամ դեն նետի նողկալի կերակուրից մի պատառ, կարող են իրեն եւս խժռել։ Դրանից վեր՝ առավել անաստված Դիոգենեսի ձայնը երեխաներին սովորեցնում է զոհաբերել իրենց հայրերին ու խժռել։ Եւ ինչ։ Մինթե պատմիչ Հերոդոտոսը չի պատմում, որ

[2] *Տե՛ս Առ Ավտոլիկոս, գր. Ա.։*

Կամբյուսեսը[3], սպանելով Հարպագոսի որդիներին, նրանց որպես սնունդ հրամցրեց իրենց հորը: Նույն կերպ էլ հնդիկների մասին է պատմում, որ նրանց հայրերին խժռում էին հարազատ երեխաները: Ո՜հ, ինչ անաստված է ուսմունքը նրանց, ովքեր գրում կամ ավելի շուտ՝ սովորեցնում էին այդ բանը. ո՜հ, ինչ սրբապղծություն եւ անաստվածություն է բնորոշ նրանց. ո՜հ, ինչ [սարսափելի է] այդքան հանգամանորեն իմաստակողների եւ իմաստություն քարոզողների բանականությունը: Արդ, այս ամենը սովորեցնողներն են, որ աշխարհով մեկ սրբապղծություն սփռեցին:

Զ. Իսկ ապօրինի խառնակությունների հետ համաձայն է ձեր փիլիսոփաների գրեթե ամբողջովին մոլորված երգչախումբը: Եւ նրանցից առաջինը Պլատոնն է՝ իր փիլիսոփայությամբ նրանցից ամենապատվարժանը. սա իր՝ քաղաքականության մասին աշխատասիրության առաջին գրքում[4] ընդգծված կերպով ասես օրինականացնում է, որ բոլորը պիտի ընդհանուր կանայք ունենան՝ առաջնորդվելով Զեւսի օրինակով եւ կրետացիների օրենսդրով[5]: Եւ դա հիմնավորում է այն հանգամանքով, որ իբրեւ թե այդու մեծանում է որդեծնությունը, եւ որ իբրեւ թե չարչարանքներով ուժասպառ եղողներն այդօրինակ շփումներով սփոփանք են գտնում: Էպիկուրը եւս, անաստվածության ուսմունքից բացի, խորհուրդ է տալիս զուգավորվել մայրերի եւ քույրերի հետ՝ հակառակ դա արգելող օրենքներին: Սոլոնը հստակ օրենք էր հաստատել առ այն, որ երեխաներն օրինավոր ամուսնությունից ծնվեն, այլ ոչ թե պոռնկությունից, որպեսզի որեւէ մեկը որպես հայր չպատվեր նրան, ով իր հայրը չէ, կամ անգիտությամբ չանարգեր իր իրական հորը: Հույների եւ հռոմեացիների այլ օրենքներ եւս թույլ չէին տալիս այդ բանը: Որեմն ինչո՞ւ են էպիկուրն ու ստոիկները սովորեցնում խառնակվել քույրերի եւ այրերի հետ եւ այդօրինակ ուսմունքներով հագեցնում գրադարանները, որպեսզի այս կերպ մանկանց սովորեցնեն ապօրինի միությունների: Էլ ի՞նչ իմաստ ունի, որ ես շարունակեմ այս մասին խոսել, երբ նրանք իրենց, այսպես կոչված, աստվածությունների օրինակով էին նման բաներ քարոզում:

---

[3] *Այստեղ սխալմամբ Աստյուագեսի փոխարեն գրված է Կամբյուսեսի անունը. (ՀԵՐՈԴՈՏՈՍ, Պատմություն, Ա. 119), որտեղ, ընդ որում, հիշատակված է Հարպագոսի միայն մեկ որդին:*

[4] *Հարկ է կարդալ՝ հինգերորդ գրքում:*

[5] *Խոսքը Մինոսի մասին է:*

Է. *Աստվածների գոյությունն ընդունողները հետագայում նրանց առ ոչինչ էին համարում։ Այսպես՝ ոմանք ասում էին, որ դրանք հյուլեներից են կազմված, այլք՝ որ հյուլեների են վերածվում, եւ որ աստվածների զորությունն ավելին չէ, քան մարդկանց զորությունը։ Պնդելով, որ աստվածներ գոյություն ունեն՝ Պլատոնն աներկբայորեն դրանց նյութից առաջացած էր համարում։ Պյութագորասը, որը տեւական ժամանակ զբաղվում էր աստվածների շուրջ հետազոտություններ կատարելով եւ նույնքան էլ աշխարհով մեկ ճամփորդելով, վերջապես դրանց որպես բնություն է սահմանում եւ ասում, որ այդ ամենը պատահականորեն է կատարվում, որ աստվածները մարդկանց մասին ամենեւին հոգ չեն տանում։ Չեմ հիշատակում այն, թե ինչպես էր Կլիտոմաքոսը՝ ակադեմիկոսը, համարձակվում հերքել Աստծու կեցությունը։ Արդյոք նույն բանը չե՞ն սովորեցնում Կրիտիոսն ու Պրոտագորաս Աբդերցին՝ ասելով. «Եթե նույնիսկ աստվածներ գոյություն ունեն, ես չեմ կարող նրանց մասին ո՛չ խոսել, ո՛չ էլ ցույց տալ, որովհետեւ շատ բան է դրան խոչընդոտում»։ Ավելորդ է խոսել Էվհեմերոսի ծայրահեղ անաստվածության մասին։ Համարձակվելով շատ բան խոսել աստվածություններից՝ ի վերջո սկսեց պնդել, որ բնավ աստվածներ չկան, որ ամեն ինչ պատահականորեն է կատարվում։ Պլատոնը, որն այնքան շատ է խոսում Աստծու միասնության (իմա՛ միակություն, միեղինություն) եւ մարդու հոգու մասին՝ հավաստիացնելով, որ հոգին անմահ է, այդ ամենից հետո արդյոք չի՞ հակասում ինքն իրեն, երբ ասում է, որ ոմանց հոգիները վերաբնակվում են ուրիշ մարդկանց մեջ, իսկ ոմանց հոգիները՝ անբան կենդանիների։ Արդյոք հաչս խոհեմ մարդկանց այս ուսմունքը սարսափելի եւ անիրավ չէ՞, այսինքն՝ նա, ով մարդ է եղել, հետո գայլ կամ շուն, կամ ավանակ, կամ էլ ինչ-որ մի այլ անբան կենդանի կդառնա։ Նման բարբաջանք դուրս է տալիս նաեւ Պյութագորասը, որը բացի այդ՝ հերքում է նաեւ Նախախնամությունը։ Սրանցից ո՞ր մեկին հավատանք՝ կատակերգու դերասան Ֆիլիմոնին, որն ասում է. «Աստծուն պաշտողները փրկության մեծ հույս ունեն»*[6]*, թե՞ վերոհիշյալ անձանց՝ Էվհեմերոսին, Էպիկուրին, Պյութագորասին եւ այլոց, ովքեր հերքում են աստվածապաշտությունն ու Նախախնամությունը։ Արիստոնն Աստծու եւ Նախախնամության մասին խոսք ունի. «Հուսադրվի՛ր. Աստված սովորաբար օգնում է բոլոր արժանավորներին եւ առավե-*

---

[6] *Այս չափածո տողը մեջբերել է Ս. Եպիփան Կիպրացին իր «Անկյուրատոս» («Խարիսխ») երկում (տե՛ս գլ. 106)։*

լապես նրանց։ Եթե ապրողների համար հարկ եղած ձեւով ոչ մի հատուցում չկա, ապա ինչ օգուտ բարեպաշտությունից»[7]։

«Ընդունենք, որ այդպես է, բայց ես հաճախ տեսնում եմ, որ բարեպաշտ կյանքով ապրել ցանկացողները դժբախտությունների են մատնվում, իսկ նրանք, ովքեր իրենց շահից բացի՝ ուրիշ որեւիցե բան չեն տեսնում, գտնվում են ավելի պատվարժան վիճակում, քան մենք»[8]։

«Այս իրական կյանքում հարկ է հեռուն նայել ու բոլորի վախճանին սպասել։ Արդ, ոչ թե դիպվածը չէ, որ կառավարում է բոլորին, ինչպես կյանքի հարցում անօգտակար եւ ամբարիշտ կերպով մտածում են ոմանք. այսպիսի կարծիք սատարում են վատ մարդիկ՝ ի պաշտպանություն իրենց անառակաբարո կյանքի։ Բայց բարեպաշտ ապրողները վարձք կստանան, իսկ անօրենները՝ արժանի պատիժ։ Արդ, ոչինչ չի լինում առանց Նախախնամության»[9]։

Ինչ վերաբերում է Աստծու եւ Նախախնամության վերաբերյալ այլոց եւ գրեթե մեծամասնության կարծիքներին, ապա դյուրին է նկատել, թե ինչ համահունչ էին մեկը մյուսին նրանք խոսում. ոմանք բոլորովին հերքում էին Աստծու եւ Նախախնամության գոյությունը, այլք խոստովանում էին Աստծու գոյությունն ու պնդում, որ ամեն ինչ կառավարում է Նախախնամությունը։ Ուստի խոհեմ ընթերցողը կամ ունկնդիրը պիտի մեծ ուշադրություն դարձնի նրանցից յուրաքանչյուրի խոսքին, ինչպես ասել է Սիմիլիսը. «Պոետները սովորաբար, լավը լինեն թե վատը, միանման են խոսում, իսկ մենք պիտի քննենք»[10]։ Այսպես ուրեմն՝ նա, ով քննադատաբար է ուսումնասիրում փիլիսոփաների եւ բանաստեղծների կարծիքները, պիտի ուշիուշով վերաբերվի եւ քննի այն, ինչ նրանք ասում են։ Ֆիլիմոնը նաեւ ասում է. «Զանձրալի է, երբ նստած [լսում] է ունկնդիրն անհասկացող՝ իր հիմարության պատճառով զերծ դատողությունից»[11]։

Ը. Հերքելով աստվածների գոյությունը՝ հենց իրենք էլ հետագայում ընդունում են դրանց եւ ասում, որ աստվածներն անօրեն գործեր են

---

[7] *Ապա սկսում է խոսել մեկ ուրիշ անձ, որը վիճարկում է Աստծու նախախնամությունը։*

[8] *Այստեղից կրկին սկսվում է առաջին անձի խոսքը՝ ի պաշտպանություն Նախախնամության։*

[9] *Տե՛ս* A. Meineke, Fragmenta Comicorum Graecorum, Bd. 1—5, Berlin 1839—1857։

[10] *Ըստ Մեյնեկեի կարծիքի՝ Սիմիլիսն ապրել է Օգոստոսի ժամանակներից փոքր-ինչ առաջ, իսկ Տարպեոսի մասին նրա մի քանի չափածո տողերը պահպանել է Պլուտարքոսն իր Հռոմուլոսի կենսագրության մեջ (էջ 17)։*

[11] *Տե՛ս* A. Meineke, Fragmenta Comicorum Graecorum, Bd. 4։

կատարում։ Առաջին՝ ձեր պոետները լիաձայն գովերգում են Զեւսի մեծ չարագործությունները։ Քրիսիպոսը՝ ափեղցփեղ ճամարտակողը, մի՞թե պարզիպարզո ցույց չի տալիս Հռեայի ապօրինի խառնակությունը Զեւսի հետ։ Կարի՞ք կա թվարկելու, այսպես կոչված, անառակությունն աստվածների մոր, կամ մարդկային արյան ծարավի լատիարոսյան Զեւսի[12], կամ ամորձատված Ատտիսի, կամ էլ Ողբերգակ կոչվող Զեւսի, որը, ինչպես ասում են, այրել էր ձեռքը, իսկ ներկայումս հռոմեացիներն աստվածություն են համարում։ Լռություն եմ պահպանում Անտինոյոսի եւ այլոց մասին, որոնց աստվածներ են կոչում, քանզի այն, ինչ պատմվում է նրանց մասին, խոհեմ մարդկանց ծիծաղն է առաջացնում։ Այսպիսով՝ ձեր փիլիսոփաներն իրենց իսկ ուսմունքներով վարկաբեկում են իրենք իրենց՝ կա՛մ անաստվածության, կա՛մ ապօրինի կենակցության առումով. նրանց ձեռամբ գրված ստեղծագործություններն էլ են վկայում մեզ, որ մարդիկ կարող են մարդկային միս ուտել, եւ որ նրանց երկերում աստվածներ հորջորջվածներն առաջինն էին այդպիսի չարագործություններ կատարելու մեջ։

Թ. Մենք նաեւ խոստովանում ենք Աստծուն, բայց՝ իբրեւ Մի, Հաստիչ, Արարիչ եւ բովանդակ աշխարհը Կարգավորող. գիտենք, որ ամեն ինչ կառավարվում է Նախախնամությամբ, բայց միմիայն Նրա՛ նախախնամությամբ. սուրբ օրենքին էլ հասու եղանք, որի օրենսդիրը ճշմարիտ Աստված է, Որն էլ սովորեցնում է մեզ արդար վարվել, լինել բարեպաշտ ու բարիք գործել։ Բարեպաշտության մասին Նա ասում է. «Ինձանից բացի՝ այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար։ Վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրա, եւ երկրի խորքի ջրերի մեջ եղած որեւէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես։ Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց, որովհետեւ Ես եմ քո Տեր Աստվածը»[13]։ Իսկ բարիք գործելու մասին ասաց. «Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես այն երկրի վրա, որը Տեր Աստված տալու է քեզ»։ Իսկ արդարության վերաբերյալ ասում է. «Մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, մերձավորիդ դեմ սուտ վկայություն մի՛ տուր, մերձավորիդ կնոջը մի՛ ցանկացիր, ո՛չ նրա տան վրա, ո՛չ նրա ագարակի վրա, ո՛չ նրա ծառա-

---

[12] *Լատիարոսյան Զեւսի արյունահեղ պաշտամունքի մասին հիշատակել են նաեւ Հուստինոս Վկան («Բ.Զատագովություն», գլ. ԺԲ.), Տատիանոսը («Ընդդեմ հույների», գլ. ԻԹ.) եւ այլք։*

[13] *Հմմտ. Ելք Ի.3–17։*

յի վրա, ո՛չ նրա աղախնու վրա, ո՛չ նրա եզան վրա, ո՛չ նրա էշի վրա, ո՛չ նրա որեւիցե անասունի վրա, ո՛չ այն ամեն վրա, ինչ քո մերձավորինն է, աչք մի՛ ունեցիր։ Մի՛ ծուիր աղքատի գործը դատի ընթացքում, հեռո՛ւ մնա ամենայն սուտ խոսքից, մի՛ սպանիր անմեղին եւ արդարին, մի՛ արդարացրու մեղավորին, նվերներ չվերցնես, որովհետեւ նվերները կուրացնում են տեսունակների աչքերը եւ խեղաթյուրում արդար խոսքերը»[14]։ Սույն աստվածային օրենքի սպասավորը Մովսեսն էր՝ Աստծու ծառան, բովանդակ աշխարհի, բայց առավելապես եբրայեցիների համար, որոնք նաեւ հրեա են կոչվում։ Նրանց հին ժամանակներում եգիպտական թագավորը ստրկության մեջ էր պահում, այնինչ նրանք բարեպաշտ եւ սուրբ մարդկանց՝ Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի արդար սերունդներն էին։ Աստված, սակայն, չմոռացավ նրանց եւ Մովսեսի ձեռամբ զարմանահրաշ նշաններ եւ հրաշքներ գործելով՝ ազատագրեց ու դուրս բերեց Եգիպտոսից, անցկացրեց անապատի միջով եւ վերադարձրեց Քանանի երկիր, որը հետագայում Հուդա կոչվեց, եւ հենց նրանց էլ օրենք տվեց եւ ուսուցանեց այս ամենը։ Այսպիսիք են վերոբերյալ տասը գլուխները (իմա՝ պատվիրանները) այդ մեծ եւ զարմանալի օրենքի՝ առ ամենայն արդարության առաջնորդող։

Ժ. Հրեաները, որ քաղդեական երկրից են սերում, եկվորներ էին Եգիպտոսում (այդժամ այնտեղ մոլեգնող սովի պատճառով էին գաղթել Եգիպտոս, որտեղ հաց էր վաճառվում, եւ այդտեղ էլ երկար ժամանակ ապրեցին, ինչը եւ պատահեց նրանց հետ ըստ Աստծու կանխասացության) եւ այդտեղ էլ հաստատվեցին չորս հարյուր երեսուն տարի, իսկ երբ Մովսեսի միջոցով դուրս ելան եւ գնացին անապատ, այդտեղ էլ Աստված նրանց օրենքի միջոցով սովորեցրեց՝ ասելով. «Պանդուխտին մի՛ ճնշեք, որովհետեւ դուք գիտեք պանդուխտների հոգին, քանի որ ինքներդ էլ պանդուխտ էիք եգիպտացիների երկրում»[15]։

ԺԱ. Քանի որ այս ժողովուրդը խախտում էր աստվածատուր օրենքը, ապա բարի ու գթասիրտ Աստված, չկամենալով նրանց կործանել, ոչ միայն օրենք տվեց նրանց, այլեւ դրանից հետո էլ իրենց եղբայրների միջից մարգարեներ էլ ուղարկեց, որպեսզի խելքի բերեն նրանց, հիշեցնեն օրենքի պատվիրանները եւ ապաշխարության մղեն նրանց, որ

---

[14] *Հմմտ. Ելք ԻԳ.6–8։*
[15] *Ելք ԻԳ.9։*

այլեւս չմեղանչեն։ Այս մարգարեները կանխասում էին, որ եթե նրանք համառեն իրենց չարագործությունների մեջ, ապա ստրկության կմատնվեն բոլոր երկրային թագավորություններից, ինչը եւ անըստգյուտ կատարվեց նրանց վրա։ Ապաշխարության մասին Եսայի մարգարեի խոսքն առհասարակ վերաբերում է բոլորին, բայց հատկապես՝ ժողովրդին. «Փնտրեցե՛ք Տիրոջը եւ երբ գտնեք, կանչեցե՛ք Նրան. երբ Նա ձեզ մոտենա, ամբարիշտը թող հրաժարվի իր ընթացքից, անօրեն մարդը՝ իր ցանկություններից, եւ թող նա դառնա առ իր Տեր Աստված եւ ողորմություն կգտնի, որովհետեւ Նա բազմապատիկ թողություն պիտի շնորհի ձեր անօրենություններին»[16]։ Մեկ ուրիշ մարգարե՝ Եզեկիելը, ասում է. «Անօրենը եթե հետ կանգնի իր գործած բոլոր անօրենություններից ու պահի Իմ պատվիրաններն ու արդարություն գործի, ապա ապրելով ապրելու է ու չի մեռնելու. նրա կատարած բոլոր անիրավությունները չեն հիշվելու, այլ իր գործած արդարության համար նա ապրելու է։ Մի՞թե ես մեղավորի մահն եմ տենչում,— ասում է Տերը,— եւ ոչ թե այն, որ նա չար ճանապարհներից հետ դառնա ու ապրի»[17]։ Եսային դարձյալ ասում է. «Հե՛տ դարձեք, դուք, որ գաղտնի ու չար խորհուրդներ եք խորհում, որպեսզի փրկվեք»[18]։ Իսկ Երեմիան ասում է. «Դարձե՛ք առ Տեր Աստված ձեր, ինչպես խաղող քաղողի զամբյուղում [ողկույզները], այնպես էլ դուք ողորմության կարժանանաք»[19]։ Շատ անգամ կամ ավելի ճիշտ՝ անթիվ-անհամար անգամ է Սուրբ Գրքում խոսվում ապաշխարության մասին, քանզի Աստված միշտ կամենում է մարդկային ցեղը հետ պահել բոլոր մեղքերից։

ԺԲ. Մարգարեների եւ ավետարանիչների խոսքերն օրենքի պատվիրած արդարության հարցում չեն հակասում իրար, քանզի նրանք բոլորն էլ խոսում էին նույն Աստծու Հոգուց ներշնչված։ Եսային այսպես է ասում. «Թոթափեցե՛ք ձեր հոգիներից նենգությունը, սովորեցե՛ք բարիք գործել, արդարությո՛ւն փնտրեցեք դատի ժամանակ, փրկեցե՛ք զրկվածին, արդարադա՛տ եղեք որբի հանդեպ, իրավո՛ւնք արեք այրուն»[20]։ Նա նաեւ ասում է. «Քանդի՛ր անիրավության հանգույցը, խորտակի՛ր բռնի պայ-

[16] Հմմտ. Եսայի ԾԵ.6–7։

[17] Եզեկ. ԺԸ.21–23։

[18] Հմմտ. Եսայի ԼԱ.6. «Որպեսզի փրկվեք» արտահայտությունը բացակայում է Յոթնասնից թարգմանությունում։

[19] Հմմտ. Երեմ. Զ.9։ Յոթնասնից թարգմանությունում բացակայում է «եւ դուք ողորմության կարժանանաք» արտահայտությունը։

[20] Հմմտ. Եսայի Ա.16։

մանագրերի ցանցերը, ազա՛տ արձակիր նեղյալներին եւ պատռի՛ր բոլոր անիրաւ մուրհակները։ Քաղցածներին բաժանի՛ր քո հացը եւ անօթեւան աղքատներին տո՛ւր քո տունը. եթե մերկ տեսնես, հագցրո՛ւ նրան եւ քո ազգակիցներին մի՛ անտեսիր։ Այնժամ այգաբացի պես պիտի ծավալվի քո լույսը, եւ արագորեն պիտի հասնի քո ապաքինումը, եւ քո առջեւից պիտի ընթանա քո արդարությունը»[21]։ Սրան հար եւ նման է Երեմիայի խոսքը. «Կանգնեցե՛ք ճանապարհներին եւ դիտեցե՛ք եւ հարցրե՛ք, թե ինչ բարի է ձեր Տեր Աստծու ուղին, գնացե՛ք դրանով եւ հանգիստ կգտնեք ձեր հոգիների համար։ Արդա՛ր դատեցեք, որովհետեւ դա է ձեր Տեր Աստծու կամքը»[22]։ Նույն կերպ է բարբառում նաեւ Օսիան. «Արդարությո՛ւն պահպանեք եւ մերձեցե՛ք ձեր Տեր Աստծուն, որ հաստատել է երկինքն ու ստեղծել երկիրը»[23]։ Մեկ այլ մարգարե՝ Հովելը, նույնպես ասում է. «Հավաքեցե՛ք ժողովրդին, սրբագործեցե՛ք ժողովը, քահանաներին հրավիրեցե՛ք, հավաքեցե՛ք ծծկեր երեխաներին, թող փեսան դուրս գա իր սենյակից, ու հարսը՝ առագաստից։ Եւ ձեր Տեր Աստծուն ջերմեռանդորեն աղոթեցե՛ք, որ ողորմի ձեզ եւ քավություն տա ձեր մեղքերին»[24]։ Սրան հար եւ նման Զաքարիա մարգարեն ասում է. «Ամենակալ Տերն արդար դատով է դատում, ողորմությո՛ւն եւ գթությո՛ւն արեք յուրաքանչյուրն իր մերձավորին։ Մի՛ կեղեքեք այրուն, որբին եւ պանդուխտին, եւ թող ոչ ոք իր սրտում ոխ չպահի իր եղբոր դեմ,— ասում է Ամենակալ Տերը»[25]։

ԺԳ. Սուրբ Խոսքն է մեզ անբասիրություն սովորեցնում, որպեսզի ոչ միայն գործով չմեղանչենք, այլեւ մինչեւ իսկ խորհրդով, նույնիսկ սրտում որեւիցե չար բանի մասին չխորհենք կամ ուրիշի կնոջը նայելով՝ տոփանքով չհամակվենք նրա նկատմամբ։ Թագավոր եւ մարգարե Սողոմոնն ասաց. «Թող քո աչքերը նայեն ուղիղ, եւ քո թարթիչները արդարությամբ շարժվեն։ Քո ոտքերին ուղիղ շավիղներ արա՛»[26]։ Մաքրաբարոյության մասին ավետարանական ձայնն առավել զորեղ է հնչում. «Ամեն մարդ, որ ուրիշի կնոջը նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում»։ «Ով, որ արձակվածին է առնում, շնանում է, ով, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, նա՛ է, որ նրան

[21] *Եսայի ԾԸ.6–8։*
[22] *Հմմտ. Երեմ. Զ.16։*
[23] *Հմմտ. Օսիա ԺԲ.6 եւ ԺԳ.4։*
[24] *Հմմտ. Հովել Բ.16։*
[25] *Հմմտ. Զաք. Է.9 եւ հաջորդ համարները։*
[26] *Առակ. Դ.25–26։*

շնության է մղում»[27]։ Սողոմոնը նաեւ ասում է. «Հնարավո՞ր է արդյոք, որ մեկը կրակը պահի իր շորի մեջ եւ շորը չայրի, կամ որեւէ մեկը բոբիկ քայլի կայծ ու կրակի միջով եւ իր ոտքերը չայրի, այդպես էլ անհնարին է որեւէ մեկին մտնել ամուսնացած կնոջ ծոցը եւ անպատիժ մնալ»[28]։

ԺԴ. Որպեսզի բարեհաճորեն տրամադրված լինենք ոչ միայն մեր ազգակիցների հանդեպ, ինչպես կարծում են ոմանք, Եսայի մարգարեն ասում է. «Ձեզ ատողներին եւ անիծողներին ասացեք՝ դուք մեր եղբայրներն եք, որպեսզի փառավորվի Տիրոջ անունն ու հայտնվի նրանց ուրախության ժամին»[29]։ Իսկ Ավետարանն ասում է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, աղոթեցե՛ք նրանց համար, ովքեր վիրավորում են ձեզ։ Արդ, եթե սիրեք ձեզ սիրողներին, ձեր վարձն ի՞նչ է. չէ՞ որ գիշատիչներն ու մաքսավորներն էլ նույնն են անում»[30]։ Իսկ բարիք գործողներին սովորեցնում է չպարծենալ՝ մարդահաճության մեջ չընկնելու համար. «Թող քո ձախ ձեռքը չիմանա,— սովորեցնում է Ավետարանը,— թե ինչ է անում քո աջը»[31]։ Աստծու Խոսքը մեզ հրամայում է նաեւ հնազանդվել թագավորներին ու իշխանություններին եւ աղոթել նրանց համար, որպեսզի «խաղաղությամբ եւ հանդարտությամբ վարենք մեր կյանքը»[32]։ Սովորեցնում է. «Հատուցեցե՛ք բոլորին իրենց պարտքերը. որին պատիվ՝ պատիվը, որին երկյուղ՝ երկյուղը, որին հարկ՝ հարկը, եւ ոչ ոքի պարտապան մի՛ մնացեք՝ բացի միմյանց սիրելուց»[33]։

ԺԵ. Այսպես ուրեմն՝ մի՞թե նրանք, որ սա ուսուցանում են, կարող են անառակ կյանքով ապրել եւ խառնակվել կամ ինչն ամենից զարհուրելին է՝ մարդկային միս ուտել, մանավանդ երբ մեզ թույլ չի տրվում կրկեսամարտիկների խաղեր դիտել՝ սպանության մասնակից ու ականատես չդառնալու համար։ Չի կարելի նաեւ այլ հանդիսություններ էլ դիտել, որպեսզի չպղծվեն մեր աչքերն ու ականջները՝ անդ հնչող խոսքերը լսելու մասնակիցները դառնալով։ Ո՞վ կմեղադրի մեզ մարդկային միս ուտելու մեջ, երբ ըստ ձեր ավանդությունների՝ խժռվում են Թիեստեսի եւ Ատրեւսի երեխաները, կամ՝ շնության մեջ, երբ բեմի վրա ներկայացվում են

---

[27] *Հմմտ. Մատթ. Ե.28, 32։*
[28] *Հմմտ. Առակ. Զ.27–29։*
[29] *Հմմտ. Եսայի ԿԶ.5։*
[30] *Հմմտ. Մատթ. Ե.44, 46։*
[31] *Մատթ. Զ.3։*
[32] *Ա.Տիմ. Բ.2։*
[33] *Հմմտ. Հռոմ. ԺԳ.7–8։*

ոչ միայն մարդկանց, այլեւ աստվածների շնությունները, որոնց քաղցրաձայն գովերգում են՝ դրա դիմաց պատիվ ու պարգեւներ ստանալով։ Թող քրիստոնյաներից հեռու մնան նման կարգի գործերի մասին մտքերը. քրիստոնյաները ողջախոհ են ու ժուժկալ, միակնություն ու մաքրություն են պահպանում, մերժում սուտը, արմատախիլ անում մեղքը, հարգում արդարությունը, պատվում օրենքը, աստվածապաշտություն կատարում. [քրիստոնյաների աշխարհում] Աստված խոստովանվում է, ճշմարտությունը՝ իշխում, շնորհը՝ պահպանում, խաղաղությունը՝ պաշտպանում, Աստծու Խոսքը՝ առաջնորդում, իմաստությունը՝ սովորեցնում, կյանքը՝ կառավարում, Աստված՝ թագավորում։ Դեռ շատ բան կարելի է ասել մեր օրենքների եւ Աստծու ու ամենայնի Արարչի պատվիրանների մասին, բայց, թվում է, ես բավականին խոսել եմ, որպեսզի դու ինքդ էլ ջանաս խորամուխ լինել հարցի մեջ, հատկապես՝ գրքերից, որոնք որ ցայժմ ընթերցում ես, որպեսզի առաջիկայում էլ քննախույզ լինես ինչպես ներկայումս։

ԺԶ. Այժմ Աստծու օգնությամբ կամենում եմ առավել հանգամանորեն շարադրել քեզ համար ժամանակագրությունը, որպեսզի իմանաս, որ մեր վարդապետությունը նորօրյա եւ առասպելական չէ, այլ ավելի հնօրյա եւ ավելի արժանահավատ է, քան անհայտի մասին գրող ձեր բոլոր բանաստեղծների եւ մատենագիրների գործերը։ Այսպես՝ ոմանք, համարելով, որ աշխարհն արարված չէ, հասնում էին անսահմանության, մյուսները, ընդունելով նրա արարված լինելը, ասում էին, որ այդ օրից ի վեր անցել է հիսուն միլիոն երեք հազար յոթանասունհինգ տարի։ Այսպես վկայում է Ապոլլոնիոս Եգիպտացին։ Պլատոնն էլ՝ թերեւս հելլեների մեջ իմաստնագույն այրը, պակաս հիմարություններ չի հայտնել այս հարցի շուրջ։ Նրա «Պոլիտիկոս»[34] խորագրով գրքում արտահայտիչ կերպով ասվում է. «Եթե ամեն ինչ մնար այնպիսին, ինչպիսին որ է ներկայումս, ապա ինչպես ի հայտ կգային նոր բաները. հընթացս բյուրավոր տարիների՝ դրանք անհայտ մնացին այն ժամանակներում ապրածների համար. դրանցից հազար կամ երկու հազար տարի առաջ ի հայտ եկածներից մի քանիսին կրկին ընտրեց Դեդալոսը, մյուսներին՝ Օրփեոսը, իսկ այլոց՝ Պալանիդոսը»։ Այս ասելով՝ նա ցույց է տալիս, որ բյուրավոր տարիներ են անցել ջրհեղեղից մինչեւ Դեդալոս։ Հետո խոսելով աշխարհի քաղաքների,

---

[34] *Պլատոնի ստորեւ մեջբերվող խոսքերը քաղված են ոչ թե նրա «Պետություն», այլ «Օրենքներ» գրքից։*

նրանց բնակչության եւ ժողովուրդների մասին՝ խոստովանում է, որ դա ենթադրաբար է ասել։ Քանզի ասում է՝ «եթե ինչ-որ Աստված ինչ-որ բան խոստանա» եւ այլն։ Պարզ է, որ նա ենթադրաբար է խոսում, իսկ թե այդպես է, նշանակում է՝ լիովին ճշմարիտ չէ այն, ինչ նա ասել է։

ԺԷ. Ըստ այդմ էլ՝ ավելի լավ է Աստծու սահմանած օրենքին աշակերտել, ինչպես եւ ինքը՝ Պլատոնն է խոստովանում, թե «չի կարելի հասու լինել ճշմարտությանը, եթե Աստված օրենքի միջոցով չսովորեցնի»[35]։ Եւ ի՞նչ։ Մի՞թե բանաստեղծները՝ Հոմերոսը, Հեսիոդոսը եւ Օրփեոսը չէին խոստովանում, որ իրենց ուսուցանել է Աստծու Նախախնամությունը։ Բացի այդ՝ մատենագիրներն ասում են, որ իրենք պատգամախոսների եւ գուշակների ժամանակակիցներն են եղել, որոնցից էլ իմացել են ճշմարտությունը եւ մանրակրկիտ գրի առել։ Իսկ որքան առավել ենք մենք՝ Սուրբ Հոգով լցված սուրբ մարգարեներից ուսանածներս, ճանաչում ճշմարտությունը։ Ըստ այդմ էլ՝ բոլոր մարգարեներն առանց իրար հակասելու էին խոսում եւ մարգարեանում բովանդակ աշխարհում կատարվելիք իրադարձությունների մասին։ Արդ, գիտելիք սիրողները կամ ավելի ճիշտ՝ կանխազդարարված եւ արդեն իսկ կատարված իրադարձությունների հիմամբ ճշմարտություն սիրողները կարող են համոզված լինել, որ միանգամայն ճշմարիտ է նաեւ այն, ինչ ասված է նախաջրհեղեղյան ժամանակների եւ տարիների մասին, եւ ըստ այդմ էլ՝ տեսնել ձեր մատենագիրների սուտն ու կեղծիքը։

ԺԸ. Պլատոնը, ինչպես արդեն նշել եմ[36], ասում է, որ ջրհեղեղը չի ողողել ողջ աշխարհը, այլ միայն դաշտավայրերը, եւ որ ոմանք փրկվել են՝ բարձրաբերձ լեռներ փախչելով։ Այլք ասում են, որ այն ժամանակ Դեւկալիոնն ու Պիրրան փրկվեցին տապանում, եւ որ Դեւկալիոնը, տապանից դուրս գալով, [ուսի վրայով] հետ շպրտեց քարեր, որոնցից առաջացան մարդիկ, այստեղից էլ, ինչպես ասում են, ժողովուրդներ (λαοὶ)[37] կոչվեցին մարդկանց մեծ խմբերը։ Իսկ մյուսներն ասում էին, որ մեկ այլ ջրհեղեղի ժամանակ է եղել Կլիմենեսը։ Իմ վերն ասածից պարզ երեւում է, որ նրանք, ովքեր այսպիսի բաներ էին գրում եւ ունայնաբար իմաստակում, թշվառ են, ամբարիշտ ու անմիտ։ Իսկ մեր մարգարե եւ Աստծու ծառա

---

[35] *Տե՛ս Հուստինոսին վերագրվող «Հորդորանքը», գլ. ԼԲ.։ Պլատոնի «Մենոն» զրույցում խոսվում է հատկապես առաքինությունների մասին։*

[36] *Տե՛ս գլ.ԺՁ.։*

[37] *Հույները քարերը (λιθοι) նաեւ λᾶες էին կոչում։*

Մովսեսը, նկարագրելով աշխարհի ծագումը, պատմեց նաեւ, թե ինչպես կատարվեց ջրհեղեղն աշխարհում՝ առանց հորինելու ինչ-որ Պիրրայի, Դեւկալիոնի ու Կլիմենոսի, ոչ էլ այն, որ իբրեւ թե միայն դաշտավայրերն են ջրհեղեղով ողողվել, եւ որ փրկվեցին միայն սարեր փախածները:

ԺԹ. Նա չի ասում, թե մի այլ ջրհեղեղ էլ է եղել, բայց ասաց, որ այսուհետ աշխարհը ջրի մեջ չի առնվի. որի պատճառով էլ ջրհեղեղ այլեւս չի եղել եւ չի էլ լինելու: Նա ասում է, որ ութ մարդ փրկվեց տապանում՝ կառուցված Աստծու հրամանով, այն էլ՝ ոչ թե Դեւակալիոնի, այլ Նոյի ձեռամբ, որի անունը եբրայերենից հունարենի թարգմանած՝ նշանակում է հանգստություն: Ինչպես եւ ցույց եմ տվել մեկ այլ գրքում[38], Նոյը, հայտնելով այն ժամանակվա մարդկանց գալիք ջրհեղեղի մասին, մարգարեացավ՝ նրանց ասելով. «Եկէք, կանչում է (Δεύτε, καλεῖ) ձեզ Աստված ապաշխարության». ահա թե ինչու նա, իսկն ասած, Դեւկալիոն կոչվեց[39]: Այս Նոյը երեք որդի ուներ՝ Սեմը, Քամը եւ Հաբեթը, ինչպես ցույց տվեցի երկրորդ գրքում[40], որոնցից յուրաքանչյուրը մի կին ուներ՝ չհաշված նրան ու իր կնոջը: Այս այրին ոմանք Էվնուհ էին անվանում: Այսպես՝ այս ութ հոգին էլ փրկվեցին տապանում: Ապա Մովսեսը ցույց է տալիս, որ ջրհեղեղը տեւեց քառասուն օր եւ քառասուն գիշեր, իսկ պատճառն այն էր, որ բացվեցին երկնքի ջրվեժները, եւ ժայթքեցին ստորգետնյա բազում աղբյուրները, այնպես որ ջրերը բարձրացան տասնհինգ կանգուն ավելի բարձր, քան ամենայն բարձրաբերձ սար: Այսպիսով՝ բնաջնջվեց այն ժամանակ ապրող մարդկանց ողջ ցեղը, իսկ փրկվեցին միայն տապանում ապաստանածները, որոնք, ինչպես վերն ասել եմ, ութ հոգի էին. սույն տապանի խլյակները ցայսօր ցույց են տալիս Արարատյան լեռների վրա: Այսպիսիք են ջրհեղեղի պատմության գլխավոր հանգամանքները:

Ի. Մովսեսը, ինչպես վերն արդեն ասել եմ[41], հրեաների առաջնորդն էր, որոնց Եգիպտոսից վտարեց Թութմոս անվամբ փարավոնը, որը, ասում են, ժողովրդին վտարելուց հետո թագավորեց եւս 23 տարի

---

[38] Թե ո՞ր ստեղծագործության մասին է խոսքը, անհայտ է:

[39] Բացի Թեոփիլոսի սույն աշխատությունից՝ Նոյի այսպիսի խոսք ու «Դեւկալիոն» անվան այսպիսի ստուգաբանություն ուրիշ տեղ չի հանդիպում: Հավանաբար այս գրողն ուզում էր ասել, որ հույները, լսելով Նոյի մարգարեության մասին եւ առ ապաշխարություն նրա կոչերը եւ դրանք իրենց լեզվով թարգմանելով, կազմեցին «Դեւկալիոն» անունը եւ վերագրեցին Նոյին:

[40] Տե՛ս «Առ Ավտոլիկոս», գր. Բ., գլ. Լ. եւ ԺԳ.:

[41] Տե՛ս աստ, գլ. Թ. եւ Ժ.:

եւ 4 ամիս, ինչպես վկայում է Մանեթոնը։ Նրանից հետո 13 տարի թագավորեց Քեբրոնը, նրանից հետո 20 տարի եւ յոթ ամիս՝ Ամենհոտեպը, որին հաջորդեց նրա քույր Ահմոսը՝ 21 տարի եւ 1 ամիս, նրանից հետո 12 տարի եւ 9 ամիս՝ Միփրիսը, նրանից հետո 20 տարի եւ 10 ամիս՝ Միփրամմոզիսը, որին հաջորդեց Թութմոսը՝ 9 տարի եւ 8 ամիս, սրան էլ՝ Դամփենոփիսը՝ 30 տարի եւ տասն ամիս, իսկ սրան հաջորդեց Օրը՝ 36 տարի եւ հինգ ամիս, ապա գահակալեց նրա դուստրը՝ 10 տարի եւ երեք ամիս, սրան էլ փոխարինեց Մերհարեբը՝ 12 տարի եւ 3 ամիս, ապա՝ նրա որդի Արմաիսը՝ 4 տարի եւ 1 ամիս։ Սրան հաջորդեց Ռամզեսը՝ 1 տարի եւ չորս ամիս, սրան էլ՝ Մեսսիս Միամնունը՝ 6 տարի եւ 2 ամիս, սրան՝ Ամենոփիսը՝ 19 տարի եւ 6 ամիս, սրան էլ՝ Փիսսն ու Ռամեսսիսը՝ 10 տարի, որոնք, ինչպես ասում են, իրենց օրոք հզոր ցամաքային եւ ծովային ռազմական բանակներ են ունեցել։ Հրեաները, որոնք այնժամ ապրում էին Եգիպտոսում, եւ որոնց ստրկացրել էր Թեթմոզիսը, նրա համար կառուցեցին Փիդոն, Ռամեսե եւ Ովն անառիկ քաղաքները. այս վերջինը ներկայումս Իլիապոլիս է կոչվում։ Այնպես որ հրեաները մեր նախահայրերն են, որոնցից մենք ստացանք սրբազան գրքերը՝ առավել հնամենի, քան ձեր բոլոր մատենագիրների գրքերը, ինչպես եւ վերն ասել եմ։ Փաստորեն նրանք, ստացվում է, որ ժամանակագրորեն ավելի առաջ են, քան այնժամ հռչակավոր եգիպտական քաղաքները։ Իսկ երկիրը Եգիպտոս կոչվեց ի պատիվ Սեթի թագավորի, քանզի Սեթին, ինչպես ասում են, Եգիպտոս անունն էլ ուներ։ Այս Սեթին եղբայր ուներ՝ Արմաիս անվամբ՝ Դանայոս կոչված, որը Եգիպտոսից Արգոս գնաց եւ ձեր տարբեր մատենագիրների կողմից հիշատակվում է որպես խոր վաղեմության մարդ։

ԻԱ. *Մանեթոնը, որ շատ էր դուրս տվել հօգուտ եգիպտացիների եւ զրպարտել Մովսեսին եւ նրան ժամանակակից հրեաներին, այսինքն՝ իբր թե նրանք Եգիպտոսից վտարվեցին բորոտության պատճառով, չէր կարող ստույգ ժամանակագրական տվյալներ ներկայացնել։ Նրանց հովիվներ եւ Եգիպտոսի թշնամիներ անվանելով՝ նա ակամա նրանց անվանում է ինչպիսին որ էին՝ բուն պատմության թելադրանքով. քանզի իրականում Եգիպտոսում ապրած մեր նախնիները հովիվներ էին, եւ ոչ՝ բորոտներ։ Արդ, հայտնի է, որ երբ նրանք հասան Երուսաղեմ կոչվող երկիր, որտեղ էլ որ հետագայում բնակություն հաստատեցին, նրանց հոգեւորականները, որոնք Աստծու հրամանով ծառայում էին տաճարում, բուժում էին ամենայն հիվանդություն, այդ թվում նաեւ՝ բորոտություն եւ*

ամենայն խոց։ Տաճարը կառուցեց հրեական թագավոր Սողոմոնը։ Մանեթոնի ժամանակագրական սխալները պարզ երեւում են իր իսկ խոսքերից. այսպես՝ նա սխալվում էր նաեւ հրեաներին վտարած թագավորի՝ փարավոնի անվան հարցում։ Բանն այն է, որ նա այլեւս չիշխեց եգիպտացիների վրա, քանի որ հրեաներին հետապնդելիս, իր զորքով հանդերձ, խեղդվեց Կարմիր ծովում։ Նա մեկ այլ հարցում էլ է սխալվում՝ իբրեւ թե հովիվները պատերազմել էին եգիպտացիների դեմ. բանն այն է, որ Դանայոսի՝ Արգոս ժամանելուց երեք հարյուր տարի առաջ նրանք արդեն ելել էին Եգիպտոսից եւ այն ժամանակներից ի վեր ապրում էին ներկայումս Հրեաստան կոչվող երկրում։ Հայտնի է, որ չափազանց մեծ թվով մարդիկ նրան համարում են բոլոր հելլեններից ամենահինավուրցը։ Մանեթոնը, սակայն, իր երկերում ակամա երկու կարեւոր ճշմարտություն է հիշատակում. առաջին՝ հրեաներին անվանում է հովիվներ, երկրորդ՝ ասում, որ նրանք ելել են Եգիպտոսից։ Այսպիսով՝ այս գրառումներից բացահայտվում է, որ Մովսեսն ու նրան ուղեկցողներն ինը հարյուր կամ հազար տարով առաջագույն են Տրոյական պատերազմից[42]։

ԻԲ. Ինչ վերաբերում է Հրեաստանում տաճարի կառուցմանը, որը կատարվեց Սողոմոնի ձեռամբ հրեաների՝ Եգիպտոսի ելքից հինգ հարյուր վաթսունվեց տարի անց, ապա տյուրոսցիները գրել են, թե ինչպես են կառուցել տաճարը, իսկ նրանց արխիվներում գրառումներ կան այն մասին, որ տաճարը կառուցել են տյուրոսցիների՝ Կարթագենը հիմնելուց հարյուր երեսունչորս տարի եւ ութ ամիս առաջ, իսկ գրառումները կատարել են Տյուրոսի արքա Աբիբալի որդի Քիրամի հրամանով, քանի որ այս վերջինը Սողոմոնի ընկերն էր՝ առ ի հարգանս նրա (իմա՛ Դավթի) ու նաեւ Սողոմոնի գերազանց իմաստության պատճառով. նրանք միշտ զբաղեցնում էին միմյանց զանազան հարցերով։ Այս բանի ապացույց է ծառայում այն, որ ցայսօր տյուրոսցիները պահպանել են նամակների մի ցուցակ, որոնք մեկը մյուսին էին ուղարկում նրանք։ Ըստ Մենանդրոս Եփեսացու տյուրոսյան թագավորության պատմության. «Տյուրոսի արքա Աբիբալի մահից հետո նրա գահը ժառանգեց նրա որդի Քիրամը, որն ապրեց 53 տարի։

---

[42] *Սովորաբար (Տատիանոսը, Կղեմես Ալեքսանդրացին եւ Եւսեբիոսը) ընդունում են, որ Եգիպտոսի ելքից մինչեւ Տրոյական պատերազմ մոտ 400 տարի է ընկած։ Սակայն Թեոփիլոսը, ինչպես նաեւ Տերտուղիանոսը («Ջատագովություն», գլ. ԻԹ.) եւ Կյուրեղը (Ա.Հուլ.), թերեւս, բանավիճային նպատակներով հետեւում են Հովսեփոս Փլավիոսի («Ընդդեմ Ապիոնի», գր. Ա., գլ. ԺՋ.) սխալ դատողություններին։*

Նրա գահը ժառանգեց Վազորը, որն ապրեց 43 տարի, իսկ թագավորեց 17 տարի։ Սրան փոխարինեց Մեթուաստարտը՝ ապրած 54 եւ իշխած 12 տարի, որին էլ փոխարինեց նրա եղբայր Աթարիմը՝ ապրած 58 եւ իշխած 9 տարի։ Սրան սպանեց Եղղիզ անունով նրա եղբայրը, որն ապրեց 50 տարի եւ թագավորեց 9 ամիս։ Այս վերջինին սպանեց Աստարտի քուրմ Յութոբալը, որն ապրեց 40 եւ թագավորեց 12 տարի։ Իսկ նրան փոխարինեց նրա որդի Վազորը, որն ապրեց 45 եւ իշխեց 7 տարի։ Սրան ժառանգող որդին էլ Մեթթինն էր՝ ապրած 32 եւ իշխած 29 տարի։ Այս վերջինի գահը ժառանգեց Պիգմալիոնը, որն ապրեց 56 եւ թագավորեց 7 տարի։ Սրա թագավորության յոթներորդ տարում Լիբիա փախած նրա քույրը մի քաղաք կառուցեց, որն առ այսօր Կարթագեն է կոչվում»։ Այսպիսով՝ ողջ ժամանակը Քիրամի թագավորելուց մինչեւ Կարթագենի հիմնարկեքը ներառում է 155 տարի եւ ութ ամիս։ Քիրամի թագավորության տասներկուերորդ տարում էլ Երուսաղեմում կառուցվեց տաճարը. այսպես ուրեմն՝ տաճարի կառուցումից մինչեւ Կարթագենի հիմնադրումն անցավ 133 տարի եւ ութ ամիս։

ԻԳ. *Այսպես՝ փյունիկեցիների եւ եգիպտացիների վկայությունները, ինչպես մենք տեղեկացել ենք մեր իրադարձությունների ժամանակների մասին պատմիչներ՝ եգիպտացի Մանեթոնի, եփեսացի Մենանդրոսի ու նաեւ հրեաների՝ հռոմեացիների դեմ մղած պատերազմը նկարագրած Հովսեփոսի պատումներից, հիմնավորապես հաստատում են մեր ասածը։ Այս հին հեղինակների հայտնած տեղեկություններից պարզ երեւում է, որ այլ մատենագիրների գրվածքները ժամանակագրորեն ավելի ուշ շրջանի են պատկանում, քան Մովսեսի եւ նույնիսկ նրանից հետո երեւան եկած մեր մարգարեների գրվածքները. զորօրինակ՝ մարգարեներից վերջինը՝ Զաքարիան, բուռն գործունեություն էր ծավալել Դարեհ թագավորի օրոք։ Ձեր բոլոր օրենսդիրների օրենքներն էլ են հրատարակվել նրանից հետո։ Արդ, եթե մեկը մատնացույց անի աթենացի Սոլոնին, ապա նա ապրել է Կյուրոսի եւ Դարեհի օրոք, եղել շատ ուշ ապրած վերոհիշյալ մարգարեի՝ Զաքարիայի ժամանակակիցը։ Իսկ ինչ վերաբերում է Լիկուրգոսին, Դրակոնին եւ Մինոսին, ապա սրանց իրենց հնությամբ գերազանցում են սրբազան գրքերը, որովհետեւ աստվածային օրենքի գրքերը՝ Մովսեսի միջոցով մեզ շնորհված, ի հայտ եկան Կրետեի թագավոր Զեւսից եւ անգամ Տրոյական պատերազմից առաջ։ Ժամանակների եւ տարիների հերթագայությունն ավելի հստակ ցույց տալու համար ես Աստծու օգնությամբ կշարադրեմ ոչ միայն նախաջրհեղեղյան,*

այլեւ հետջրհեղեղյան անցքերի տարեգրությունը, որպեսզի ըստ կարելվույն հիշատակեմ բոլոր տարիները՝ սկսյալ աշխարհի արարումից, որը Սուրբ Հոգու ներշնչանքով նկարագրեց Աստծու ծառա Մովսեսը։ Քանզի նա, խոսելով աշխարհի, նախաստեղծ մարդու արարման եւ ստեղծման մասին, ցույց տվեց նաեւ ջրհեղեղից առաջ անցած-գնացած տարիները։ Իսկ ես շնորհ եմ խնդրում միմիայն Աստծուց, որ Աստծու կամքին համահունչ, ստույգ ներկայացնեմ ամբողջ ճշմարտությունը, եւ որ դու եւ ամենայն ոք, ով կկարդա սա, խրատված լինեք Նրա ճշմարտությամբ եւ շնորհով։ Այսպես ուրեմն՝ ձեռնամուխ եմ լինում գրի առնված ազգաբանությունների շարադրանքին՝ նախաստեղծ մարդուց սկսյալ։

ԻԴ. Ադամը 230 տարեկան էր, երբ երեխաներ ծնեց, նրա որդի Սեթը 205 տարեկան էր, երբ ծնեց Ենոսին, նրա որդի Ենոսը 190 տարեկան էր, երբ ծնեց Կայնանին, Կայնանը 170 տարեկանում ծնեց Մաղաղայելին, Մաղաղայելը 165 տարեկան էր, երբ ծնեց Հարեդին, սա 162 տարեկանում ծնեց Ենոքին, սա 165 տարեկանում՝ Մաթուսաղային, սա 187 տարեկանում[43]՝ Ղամեքին, սա 188 տարեկանում ծնեց վերոբերյալ Նոյին, որը 500 տարեկանում ծնեց Սեմին, Քամին եւ Հաբեթին։ Նոյը 600 տարեկան էր, երբ սկսվեց ջրհեղեղը։ Այսպիսով՝ մինչեւ ջրհեղեղը 2242 տարի էր անցել։ Անմիջապես ջրհեղեղից հետո Սեմը 100 տարեկան հասակում ծնեց Արփաքսադին, Արփաքսադը 135 տարեկանում ծնեց Սաղային, սա 130 տարեկանում՝ Եբերին. նրա անունով կոչվեց ողջ հրեական ազգը, Եբերը 134 տարեկան հասակում ծնեց Փաղեկին, սա 130 տարեկանում՝ Ռագավին, սա 132 տարեկանում՝ Սերագին, սա 130 տարեկանում՝ Նաքորին, սա 75 տարեկանում՝ Թարային, սա 70 տարեկանում ծնեց Աբրահամին, մեր այս նահապետը 100 տարեկանում ծնեց Իսահակին։ Այսպիսով՝ մարդու արարումից մինչեւ Աբրահամ ընկած ժամանակահատվածը կազմում է 3278 տարի։ Իսահակը մինչեւ իր երեխաների ծնվելը 60 տարի էր ապրել եւ ծնեց Հակոբին, Հակոբը մինչեւ Եգիպտոս տեղափոխվելը, ում մասին արդեն վերը խոսել ենք, 130 տարեկան էր. հրեաները Եգիպտոսում ապրեցին 430 տարի, իսկ Եգիպտոսից ելնելուց հետո, այսպես կոչված, անապատում 40 տարի անցկացրին։ Այսպիսով՝ բոլորը միասին կազմում են 3938 տարի։ Իսկ երբ Մովսեսը կնքեց մահկանացուն, առաջ-

---

[43] Սբ. Թեոփիլոսի ռուսերեն բնագրում՝ 167 տարի, ինչը, հավանաբար, հրատարակչական վրիպակ է, քանզի սուրբգրային բոլոր բնագրերում 187 է։*

նորդությունն ստանձնեց Նավեի որդի Հեսուն, որը եւ 27 տարի առաջնորդեց ժողովրդին։ Հեսուից հետո, երբ հրեաները հեռացան Աստծու պատվիրաններից, Միջագետքի [ասորեստանցի] արքա Քուսարսաթեմը 8 տարի ստրկացրեց նրանց։ Հետո, երբ ժողովուրդը ապաշխարեց, եկավ դատավորների ժամանակաշրջանը։ Գոդոնեիլը քառասուն տարի դատավորություն արեց, Եգղոմը՝ 18 տարի, Ավոդը՝ 8 տարի։ Երբ հետագայում ժողովուրդը խախտեց Աստծու պատվիրանները, այլազգիները 20 տարի իշխեցին նրա վրա։ Ապա Դեբորան 40 տարի դատավորություն արեց։ Հետո մադիամացիները 7 տարի իշխեցին նրանց վրա, որից հետո Գեդեոնը 40 տարի դատավորություն արեց, Աբիմելեքը՝ 3 տարի, Թողան՝ 23 տարի, Հայիրը՝ 22 տարի։ Փղշտացիներն ու ամոնացիները 18 տարի տիրեցին նրանց։ Ապա Հեփթայենը 6 տարի դատավորություն արեց, Եսեբոնը՝ 7 տարի, Ելոնը՝ 10 տարի, Աբդոնը՝ 8 տարի։ Այնուհետեւ այլազգիները 40 տարի իշխեցին հրեաների վրա։ Ապա Սամփսոնը 20 տարի դատավորություն արեց, որից հետո նրանք քառասնամյա խաղաղություն վայելեցին։ Հետո դատավորություն արեցին՝ Սամիրան[44]՝ մեկ տարի, Հեղին՝ 20 տարի, եւ Սամուելը՝ 12 տարի։

Իե. *Դատավորներից հետո սկսվեց թագավորների շրջանը. առաջին թագավորը Սավուղն էր, որն իշխեց 2 տարի, ապա Դավիթը՝ մեր նախահայրը՝ 40 տարի։ Այսպիսով՝ բոլոր տարիների ընդհանուր թիվը՝ Մովսեսի մահից մինչեւ Դավթի գահակալություն, 498 է կազմում։ Նրանցից հետո 40 տարի թագավորեց Սողոմոնը, որն Աստծու կամոք Երուսաղեմում տաճար կառուցեց։ Նրան փոխարինեց Հերոբովոմը՝ 17 տարի իշխելով, որից հետո 7 տարի՝ Աբիան, որից հետո 41 տարի՝ Ասան, ապա Հոսափատը՝ 25 տարի, ապա 8 տարի՝ Հորամը, որից հետո մեկ տարով թագավորեց Օքոզիան, նրանից հետո 6 տարով՝ Գոթողիան, նրանից հետո 40 տարի՝ Հովասը, նրանից հետո 39 տարի՝ Ամեսիան, որից հետո 52 տարի՝ Օզիասը, նրան 16 տարով փոխարինեց Հովաթամը, որին 17 տարի փոխարինեց Աքազը, նրանից հետո 29 տարի՝ Եզեկիան, որին էլ 55 տարի՝ Մանասեն, նրանից հետո 2 տարի թագավորեց Ամոսը, Ամոսից հետո 31 տարի՝ Հռեուն, նրանից հետո 3 ամիս եւ տասն օր՝ Հովաքազը, որից հետո էլ 11 տարի թագավորեց Սեդեկիան։ Այս թագավորներից հետո, երբ*

---

[44] *Աստվածաշնչում Սամիրայի անունը հիշատակված չէ։ Թերեւս, «Սամիրայի» փոխարեն հարկ է կարդալ «Թամիրա», որով Թեոփիլոսը նկատի ունի Իթամարին (տե՛ս Հովսեփոս Փլավիոս («Ընդդեմ Ապիոնի», գր. Ե., գլ. ԺԱ.)։*

ժողովուրդը շարունակում էր մեղանչել եւ անզիղջ մնալ, Երեմիայի մարգարեության համաձայն՝ Հրեաստանի վրա հարձակվեց Նաբուքոդոնոսոր անվամբ Բաբելոնի թագավորը: Նա տեղահան արեց հրեա ժողովրդին եւ բնակեցրեց Բաբելոնում եւ քարուքանդ արեց Սողոմոնի կառուցած տաճարը: Բաբելոնյան գերության մեջ ժողովուրդն ապրեց 70 տարի: Աշխարհի արարումից մինչեւ բաբելոնյան գերություն ընկած ժամանակահատվածը կազմում է 4954 տարի, 6 ամիս եւ 10 օր: Եւ ինչպես որ Աստված Երեմիա մարգարեի միջոցով կանխասաց, որ ժողովուրդը կգերեվարվի Բաբելոն, այնպես էլ Նա հայտնեց նրա վերադարձի մասին իր երկիր 70 տարի անց: Այսպես՝ 30 տարի անց Կյուրոսը դարձավ պարսից թագավոր, որն ըստ Երեմիայի մարգարեության՝ իր գահակալության երկրորդ տարում գրավոր հրովարտակով հրաման տվեց, որ իր թագավորության սահմաններում ապրող բոլոր հրեաները վերադառնան իրենց երկիր եւ վերակառուցեն Աստծու տաճարը՝ հիմնահատակ ավերված վերոբերյալ Բաբելոնի արքայի կողմից: Ընդ որում՝ Կյուրոսը, Աստծու կամոք, հրամայեց իր թիկնապահներ Սաբեսսարին եւ Միհրդատին տաճարում գործածելու համար հետ դարձնել ողջ կայքն ու սպասքը, որոնք Նաբուքոդոնոսորը վերցրել էր հրեական տաճարից: Դարեհի գահակալության երկրորդ տարում լրացավ Երեմիա մարգարեի կանխասած 70 տարին:

ԻԶ. Այստեղից կարելի է պարզ տեսնել, թե մեր սրբազան գրքերը որքան ավելի հնամենի ու ճշմարտապատում են, քան հունական եւ եգիպտական ու մյուս բոլոր պատմիչների գրքերը: Հերոդոտոսը, Թուկիդիտեսը եւ Քսենոփոնն ու այլ պատմիչներ սկսում էին գրել Կյուրոսի եւ Դարեհի գահակալությունից եւ հնարավորություն չունեին առավել արժանահավատորեն խոսելու հնագույն եւ վաղագույն ժամանակներից: Արդ, ինչ մեծ բան կա այն բանում, որ պատմիչները խոսում էին բարբարոսների արքաներ Դարեհից եւ Կյուրոսից, հելլեները՝ Զոպյուրոսից եւ Հիպպաոսից, կամ աթենացիների եւ լակեդեմոնացիների պատերազմներից, կամ Քսերքսեսից եւ Պավսանիասի գործերից, որն Աթենասի մեհյանում սովամահ լինելու վտանգի էր ենթարկվել, կամ Թեմիստոկլոսից եւ պելոպոննեսյան պատերազմից, կամ էլ Ալկվիդիոսից եւ Ֆրազիվուլուսից: Միտք չունեմ հանգամանորեն ամեն ինչից խոսելու, այլ միայն ցույց տալու աշխարհի արարումից անցած-գնացած տարիների թիվը եւ բացահայտելու մատենագիրների սին չարչարանքն ու դատարկաբանությունը, քանզի ոչ թե, ինչպես ասում է Պլատոնը, քսան հազար բյուր տարի է ըն-

կած ջրհեղեղից մինչեւ իր օրերը, եւ ոչ էլ տասնհինգ բյուր երեք հազար յոթանասունհինգ տարի, ինչպես վկայում է Ապոլլոնիոս Եգիպտացին, եւ ոչ էլ այն, որ աշխարհը սկիզբ չունի, եւ ամեն ինչ պատահականորեն է գոյացել, ինչպես դատարկախոսում են Պյութագորասն ու այլք, այլ աշխարհն առաջացել եւ կառավարվում է ամեն ինչ ստեղծած Աստծու Նախախնամությամբ։ Եւ [բնականաբար] բոլոր ժամանակների եւ տարիների [խնդիրը] ակնհայտ է նրանց համար, ովքեր կամենում են համոզված լինել ճշմարտության մեջ։ Իսկ որպեսզի չմտածեն, թե ես ժամանակագրությունը հասցրել եմ մինչեւ Կյուրոս եւ աչքաթող արել հաջորդ ժամանակները, ասես թե հնարավորություն չունենալով դրանք ցույց տալու, կաշխատեմ Աստծու օգնությամբ ըստ կարելվույն շարադրել նաեւ ժամանակի հաջորդական ընթացքը։

Իէ. Կյուրոսն իր 8-ամյա գահակալությունից հետո Տոմյուրիսի ձեռամբ սպանվեց Մասսագետում 62-րդ օլիմպիադայի օրերին (այդ ժամանակներում է, որ Աստծու օգնությամբ հզորացան հռոմեացիները, [հատկապես] այն բանից հետո, երբ Հռոմուլոսը՝ Հռեայի եւ Իլիի զավակը, կառուցեց Հռոմը 7-րդ օլիմպիադայի ժամանակ՝ մայիսյան ամսամուտի 16-րդ օրը, քանի որ տարին կազմված էր տասն ամսից), այսպիսով՝ երբ մահացավ Կյուրոսը, ինչպես վերն ասացինք, վաթսուներկուերորդ օլիմպիադայի օրերին, Հռոմի հիմնարկեքից արդեն անցել էր 220 տարի, եւ այդ ժամանակ հռոմեացիների թագավորը Տարքվինիոսն էր՝ Սուպերբուս (Գոռոզ) մականունով։ Նա առաջինն էր, որն արտաքսեց որոշ հռոմեացիների, որը պղծում էր տղաների եւ ամորձատում քաղաքացիների, նույնիսկ կուսությունից զրկում աղջիկների եւ նրանց ամուսնացնում։ Այդ պատճառով է, որ նա հռոմեացիների լեզվով կոչվեց Superbus՝ υπερήφανος՝ *գոռոզ։ Նա առաջինն է, որ վճիռ կայացրեց առ այն, որ նրանք, ովքեր իրեն ողջունեն, իրենց հերթին իրենք էլ որեւիցէ մեկից ողջույն ստանան։ Սա թագավորեց 25 տարի։ Սրանից հետո՝ հընթացս 453 տարվա, մեկական տարի կառավարեցին կոնսուլները*[45]*, տրիբունները*[46] *եւ էդիլները*[47]*, որոնց անունները հականե-հանվանե թվարկե-*

[45*] Կոնսուլ — *Հին Հռոմում քաղաքական եւ զինվորական բարձրագույն իշխանությամբ օժտված պաշտոնյա։*

[46*] Տրիբուն — *Հին Հռոմում պլեբսի՝ հասարակ ժողովրդի ընտրած պաշտոնյա։*

[47*] Էդիլ — *Հին Հռոմում տրիբունի օգնական՝ զանազան գործառույթներն իրականացնող պաշտոնյա։*

լը համարում եմ տեւական եւ ավելորդ։ Արդ, եթե որեւէ մեկը ցանկանա իմանալ նրանց անունները, կարող է գտնել դրանք նոմենկլատոր[48] Քրիզերոսի՝ Մ. Ավրելիոս Վերոսից ազատություն ստացած ստրուկի գրառումներում, որն արձանագրել է ամեն ինչ՝ եւ անուններ, եւ ժամանակներ՝ Հռոմի հիմնարկեքից սկսյալ եւ վերջացյալ իր հովանավոր ինքնակալ Վերոսի վախճանով։ Այսպես ուրեմն՝ հընթացս 453 տարվա, ինչպես ասացինք, հռոմեացիներին ղեկավարում էին տարեկան կառավարիչները։ Ապա երկրի կառավարումն ստանձնեցին, այսպես կոչված, կայսրերը, որոնցից առաջինը Գայոս Հուլիոսն էր [Կեսարը], որը թագավորեց 3 տարի, 4 ամիս եւ 6 օր, ապա Օգոստոսը՝ 56 տարի, 4 ամիս եւ մեկ օր, ապա՝ Տիբերիոսը՝ 22 տարի։ Հետո մեկ այլ Գայոս՝ 3 տարի, 8 ամիս եւ 7 օր, ապա թագավորեցին Կլավդիոսը՝ 13 տարի, 8 ամիս եւ 24 օր, Ներոնը՝ 13 տարի, 6 ամիս եւ 28 օր, Գալբան՝ 7 ամիս եւ 6 օր, Օտոն՝ 3 ամիս եւ 5 օր, Վիտելիոսը՝ 6 ամիս եւ 22 օր, Վեսպասիանոսը՝ 9 տարի, 11 ամիս եւ 22 օր, Տիտոսը՝ 2 տարի եւ 22 օր, Դոմոտիանոսը՝ 15 տարի, 5 ամիս եւ 6 օր, Ներվան՝ մեկ տարի, 4 ամիս եւ 10 օր, Տրայանոսը՝ 19 տարի, 6 ամիս եւ 16 օր, Հադրիանոսը՝ 20 տարի, 10 ամիս եւ 28 օր, Անտոնիոսը՝ 22 տարի, 7 ամիս եւ 6 օր, Վերոսը՝ 19 տարի եւ 10 օր։ Այսպիսով՝ կայսրերի ժամանակահատվածը՝ մինչեւ Վերոս կայսեր մահը, կազմում է 225 տարի։ Կյուրոսի մահից եւ Տարքվինիոս Գոռոզի գահակալությունից մինչեւ վերոհիշյալ կայսր Վերոսն ընկած ողջ ժամանակահատվածը 741 տարի է։

ԻԸ. Աշխարհի արարումից սկսյալ՝ ողջ ժամանակի պատկերն այսպիսին է. աշխարհի արարումից մինչեւ ջրհեղեղ՝ 2242 տարի, ջրհեղեղից մինչեւ մեր նախահայր Աբրահամի որդու ծնունդը՝ 1036 տարի, Աբրահամի որդի Իսահակից մինչեւ Մովսեսի գլխավորությամբ ժողովրդի դեգերումներն անապատում՝ 660 տարի։ Մովսեսի մահից, Հեսու Նավեի՝ առաջնորդության ստանձնումից մինչեւ Դավիթ նահապետի մահը՝ 498 տարի։ Դավթի մահից եւ Սողոմոնի գահակալությունից մինչեւ ժողովրդի՝ բաբելոնյան երկիր տեղահանումը՝ 518 տարի, 6 ամիս եւ 10 օր։ Կյուրոսի գահակալությունից մինչեւ կայսր Ավրելիոս Վերոսի մահը՝ 741 տարի։ Աշխարհի արարումից սկսյալ՝ բոլոր տարիների թիվը միասին առած 5695 է՝ մի քանի ամիսներով եւ օրերով հանդերձ։

---

[48]* Նոմենկլատոր — *Հին Հռոմում ծառա, որի պարտականության մեջ էր մտնում իր տիրոջը հիշեցնել նրան ամենուր ողջունող պարոնների, սեփական ստրուկների եւ ծառաների անունները։*

ԻԹ. Այսպիսով՝ ժամանակների եւ մեր ամենայն ասածի հիմամբ կարելի է տեսնել մարգարեական գրքերի հնամենիությունն ու մեր վարդապետության աստվածայնությունը, այն է՝ որ այդ վարդապետությունը ո՛չ նորագյուտ է եւ ո՛չ առասպելական, ո՛չ էլ մեր հավատալիքներն են կեղծ, այլ ամենահնամենին ու ամենից արժանահավատն են։ Արդ, Թալլոսը հիշատակում է ասորեստանցի թագավոր Բելուին եւ Տիտանյան Քրոնոսին՝ ասելով, որ Բիլուն տիտանների հետ միասին կռվում էր Զեւսի եւ նրա կողմնակիցների՝ այսպես կոչված աստվածների դեմ, եւ հաղորդում, որ այնտեղ պարտված Գիգեսը, որն այդժամ թագավորում էր ներկայումս Ատտիկա կոչվող Ակտոյում, փախավ Տարտիոս[49]։ Հարկ չեմ համարում ծավալվել այլ երկրների եւ քաղաքների անվանումների ստուգաբանության մեջ, հատկապես քեզ՝ պատմությանը քաջատեղյակիդ համար։ Արդ, պարզ է, որ Մովսեսը (եւ ոչ միայն նա, այլեւ նրանից հետո ասպարեզ իջած շատ մարգարեներ) ժամանակագրորեն ավելի առաջ են, քան բոլոր մատենագիրները, Քրոնոսը, Բիլուն եւ Տրոյական պատերազմը։ Արդ, ըստ Թալլոսի պատմության՝ Բիլուն ապրում էր Տրոյական պատերազմից 322 տարի առաջ, իսկ Մովսեսը՝ 900 կամ 1000 տարի առաջ նախքան Տրոյայի նվաճումը, ինչպես եւ վերը ցույց տվեցինք։ Սակայն քանի որ Քրոնոսն ու Բիլուն ժամանակակիցներ էին, ապա շատերը չգիտեն, թե ով է Քրոնոսը, ով՝ Բիլուն։ Շատերը պաշտում են Քրոնոսին՝ նրան Բիլու կամ Բալու անվանելով, մանավանդ՝ արեւելյան երկրների բնակիչները, որոնք տարբերություն չեն դնում Քրոնոսի եւ Բիլուի միջեւ։ Հռոմեացիները նրան Սատուրն են անվանում, բայց իրենք էլ չգիտեն՝ Քրոնո՞սն է, թե՞ Բիլուն։ Օլիմպիադաներն սկսեցին տոնել Իփիտոսից, ինչպես ասում են, իսկ ըստ ոմանց՝ Լիմոսից, որը նաեւ Իլիոս էր կոչվում։ Իսկ թե ինչպիսին էր տարիների եւ օլիմպիադաների ժամանակագրական կարգը, այդ մասին վերն արդեն խոսել եմ։ Կարծում եմ, որ ըստ կարելվույն հանգամանորեն ցույց եմ տվել մեր անցքերի հնամենիությունն ու բոլոր տարիների թիվը։ Եթե ես հաշվարկներում սխալ եմ թույլ տվել, օրինակ՝ 50 կամ 100, եթե նույնիսկ 200 տարի, ապա դրանք համեմատելի չեն Պլատոնի, Ապոլլոնիոսի եւ մյուսների սխալ հաշվարկներում տեղ գտած հազարավոր կամ տասնյակ հազարավոր տարիների հետ։ Որ մենք, թերեւս, ստույգ քաջատեղյակ չենք բոլոր տարիների թվին, դրա պատճառն այն է, որ սրբազան

[49] Տարտիոս — *քաղաք Իսպանիայում՝ ներկայումս արդեն գոյություն չունեցող։*

գրքերում չեն նշվել միջնական ամիսներն ու օրերը։ Բացի այդ՝ վերոբերյալ ժամանակների մասին միաբան խոսում է նաեւ Բերոսոսը՝ քաղդեացի փիլիսոփան. նա, Մովսեսին հար եւ նման, պատմում է ջրհեղեղի եւ այլ բազմաթիվ անցքերի մասին, մասամբ համաձայն է Երեմիա եւ Դանիել մարգարեներին՝ հատկապես Բաբելոնի թագավորի օրոք հրեաների հետ տեղի ունեցած իրադարձությունների հարցում։ Այդ թագավորին նա անվանում է Նաբոպալասար, այնինչ հրեաները նրան կոչում են Նաբուքոդոնոսոր։ Նա նաեւ հիշատակում է Երուսաղեմի տաճարի մասին, որն ավերել էր քաղդեացի թագավորը, եւ որ Կյուրոսի թագավորելու երկրորդ տարում տաճարի հիմքերը դրվեցին, իսկ Դարեհի գահակալության երկրորդ տարում տաճարի շինարարությունն արդեն ավարտվել էր։

Ա. Հելլենները ճշմարտապատում պատմություն չունեն։ Նախ՝ որ վերջին ժամանակներում են գիր ձեռք բերել. այդ բանն իրենք իսկ են խոստովանում՝ ասելով, որ գրերը հորինել են քաղդեացիները, եգիպտացիներն ու փյունիկեցիները, երկրորդ՝ նրանք մոլորության մեջ էին եւ այսօր էլ նույն մոլորվածներն են այն հարցում, որ հիշատակում են ոչ թե Աստծուն, այլ սին ու անօգուտ գործեր։ Այսպես՝ նրանք հարգանքով հիշում են Հոմերոսին, Հեսիոդոսին ու այլ բանաստեղծների։ Իսկ անմահ եւ մի Աստծու փառքի մասին ոչ միայն մոռանում են, այլեւ անարգում, ու բացի այդ՝ ամեն օր հետապնդում էին ու հետապնդում են Նրան պաշտողներին։ Նրանք պարգեւներ եւ նպաստներ են նշանակում նրանց, ովքեր քաղցրաձայն հայհոյում են Աստծուն, իսկ առաքինությունների մասին հոգացողներին եւ բարեպաշտ կյանքով ապրողներին՝ ոմանց քարկոծում էին, ոմանց սպանում, եւ մինչեւ օրս էլ դժնդակ կտտանքների մատնում։ Այդ է պատճառը, որ նմանօրինակ մարդիկ անխուսափելիորեն պիտի կորցնեին Աստծու իմաստությունը եւ ճշմարտությանը հասու չլինեին։ Արդ, եթե կամենում ես, ջանասիրաբար կարդա՛ իմ այս գրքերը, որպեսզի լավ խորհրդատու եւ ճշմարտության առհավատչյա ձեռք բերես։

Ռուսերենից թարգմանեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ